

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ք

(Տե՛ս Արարատ 1912, էջ 857)

1. Շարադար

Հանդէս Ամսօրեայի մէջ քանի մը անգամ խօսուեցաւ այս նորագիւտ բառին վրայ: Վերջին անգամ բժ. Յ. Թիրեաքեան մասնաւոր յօդուածի մը մէջ (ՀԱ 1912, 427) քննութեան առնելով այս բառը, կը կասկածի թէ ուղի՞ղ է արդեօք բառին ընթերցումը և թէ արդեօք ուղղելի չէ՞ քարադար, բերադար կամ պարադար: Այսպիսի սրբազրութեան մը կարծեմ թէ օլէտք չկայ, որովհետեւ շարադար մէկ անգամ և միայն մէկ հեղինակի քով գործածուած ձև մը չէ, այլ բազմաթիւ անգամներ գործածուած է, միշտ միևնոյն ձևով. հմմտ. Գիրք թղթոց, էջ 150, 168, 170, Ուխտ. Բ. էջ 60, 61—62, 64:

Թիրեաքեան այսպիսի սրբազրութեամբ կը մտածէ կցել բառս պարսկական sālār-ի-bār ձևին (որ Հ. Ակինեան յիշած էր Spiegel-էն առնելով) և երկուքը միասին հանել պրս. bar, bār=հայ. բերք, բաքի բառերէն: Բայց իրօք sālār-ի-bār ամենևին գործ չունի ասոնց հետ և կը ծագի bar «դուռ» բառէն: Ասիկա իրանեան սովորական dar «դուռ» բառին հիւսիսային գաւառական մէկ ձևն է, որ մինչև այսօր ալ կենդանի է գանազան բարբառներու մէջ. ինչպէս՝ քրդ. bar, աֆղան. var, վախի bār, քաշ. bar, ber, սեմաանի bari, հայ. բոշայերէն բար «դուռ», բարան «դուրս. արտաքս»: Ըստ այսմ sālār-ի-bār բուն կը նշանակէ «դռնապանապետ, մեծ բարապան»: Ասկէ կը ծագին նաև հայ բարապան, բարապետ, բարաւոր:

2. Կկնել

Մէկ անգամ գործածուած է Բուզանդի մէջ. «Ապա զօրավարն Հայոց Մուշեղ դուռնդ կազմեաց պատրաստեաց և յառաջեաց հանդերձ Հայոց գնդաւն. առաջապահ անցանէր առաջի թագաւորին Պապայ և զօրացն Յուենաց կայսերական գնդին: Ապա ի Դարանաղեաց գաւառին լինեալ յարձակեցաւ Մուշեղն» (Բուզ Ե. ա. տպ. 1889, էջ 191): Բառին իմաստը անյայտ է, որովհետև այլուստ ծանօթ լկնիլ բառին «լըրբիլ, համարձակիլ» նշանակութիւնը հոս չի յարմարիր: Հ. Գ. Նահապետեան Բազմ. 1906, 499 Կ'ուղղէ դիմեալ կամ գիցեալ. երկուքն ալ ըստ իս անյաջող են: Բառը օլէտք է պահել այնպէս ինչպէս կայ և տալ անոր «յարձա-

կիր՝ նշանակութիւնը. համա. Ալաշկերտի գաւառականով լեւի «յարձակիր». օր վրան լքնիլ «վրան յարձակիր» (տես իմ գաւառական բառարանս էջ 443 ա):

3. Մոռմոռոզ

Պօլսոյ բարրառով մոռմոռոզ Մեծ Պահքի յայտնի նշանակն է՝ վրան հաւի կամ սագի եօթը փետուր անցուած խօշոր գլուխ մը սոխ, զոր տանը առաստաղէն կը կախեն. իւրաքանչիւր շաբաթ մէկ փետուր կը պոկեն անկէ, որով Պահքէն քանի շաբաթ անցած կամ Զատիկին դեռ քանի շաբաթ մնացած ըլլալը դիւրութեամբ կիմացուի Պոկուած փետուրներուն համար տղաքը կը խաբեն թէ թռչունը տարաւ: (Ընդարձակ նկարագրութիւնը տես Փորձ, բ. տարի. II, էջ 289, Բիւրակն 1898 էջ 184):

Միւս գաւառականներուն մէջ այս առարկային համար կը գտնենք ախացել (նոր Հայկ. բառ.) ախելուծ (Ալէքսանդրապոլ, Ախալքալաք) ախլոն (Ախալցխա), ալլասիգ (Բաղէշ, Երևան, Նոր-Բայազետ, Վան), զոզոռոզ (Բարերդ), խուլուճիկ (Բիւթանիա, Քղի), խուխուլին (Նիկոմիդիա) խուլուրսիկ (Բիւթանիա), պահի ուտեմ (Բիւթանիա), մեծ պամի (Երզնկա), մոմո.աս (Խրիմ, Նոր-Նախիջևան): Խնուսի մէջ կը գործածուի ուրուճ պէկ ձևը, որ կազմուած է թրք ուրուճ «պահք» և պէկ «ալէշ» բառերէն: Միւս բառերուն մեկնութիւնը ինձ ծանօթ չէ:

Մոռմոռոզ, մոմո.աս ձևերը կը մեկնեմ յունարէնէ. համա. յն. μορμώ «կին հրէշ մը՝ որու անունով փոքրիկները կը վախցնէին խոխ. 2. αἰ սարսափ, սոսկալի բան (իրրև բացագանչութիւն)», μορμωτός «սարսափելի», μορμολύχη, μορμολοχίον «փոքր տղաքը վախցնելու համար շինուած խրտուիլակ, աչքի երեցած ուրուական», μορμολύττω, μορμολύττομαι, μορμώσσομαι «խրդուիլակով մը վախցնել կայ, նաև մեր փնտռած μορμορος ձևը, որմէ կազմուած է μορμορωπός «սարսափելի» (տես Bailly Dict grec-franc 1910, էջ 1298 գ):

Ասկէ կերևայ որ մոռմոռոզը հախապէս մեր մէջ ալ անձնաւորեալ ոգի մը կը համարէին, որով տղաքը կը վախցնէի պահքին հաստատ մնալու, ուտեաց բաներ չուտելու համար. հակառակ պարագային առաստաղէն կախուած շարունակ շարժուող եօթնաթևեան ոգին ղիրենք պիտի պատժէր:

Մեր բառին հետ անշուշտ նոյն է մորմորոս (Բիւթանիա) շուռ ու մունջ, քիթը կախած, տրտում տխուր. օր. ինչ մորմորոս նստեր ես:

4. Մկրտել—մխրճել

Այս երկու բառերուն ցեղակցութեան վրայ շատոնց արդէն մատնանիշ եղած են Նոր Հայկ. բառ. և մանաւանդ Տէրվիշեան, Altarmenische Ք. էջ 30 և հնդերոսական նախալեզու, էջ 70, 99. Այս ցեղակցութիւնը կը հաստատեմ ես ալ. Խ և Կ ձայներուն լծորդութեան համար կը յիշեմ իմ մէկ յօդուածս (ՀԱ 1909, էջ 159—160), ուր մէջ բերած եմ 18 օրինակ՝ որոնց մէջ Խ և Կ իրար կը փոխանակեն: Ասոնց վրայ աւելցնել պէտք է նաև խոտոր=յն. տхործոյ, որոնց համեմատութիւնը տուած եմ ՀԱ 1908, էջ 123: Այսպէսով Խ և Կ ձայներու լծորդութեան օրինակներու թիւը կը հասնի քսանի:

Նշանակութեան տարրերութիւնը զարմանալի երևալու չէ. որովհետև նոյն առնչութիւնը կը դառնենք նաև այլուր. գոթ՝ dau-rian կը նշանակել «մխրճել. 2. մկրտել». այս կրկին իմաստներէն գերմաներէնի մէջ պահուած է միայն վերջինը (taufen). Ասկէ զատ հայերէնի մէջ ալ կրնաքն դառնել մկրտել «խորասուզել» նշանակութիւնը: Հմմտ. Շիրակացւոյն (ապ. Պատկ. էջ 43) հետեւեալ հատուածը. «Յառաջ ժամանակաւ մարդք իմաստասէրք որք զանձինս իւրեանց... ետուն ի դեգերումն երկնային տեսութեանն... իսկ վարդապետք եկեղեցւոյ կարգի ուսումնասիրութեան զանձինս տուեալ՝ անցին ընդ ամենայն ճգնութիւնս, պահելով զաստուածային հաւատս մկրտեցան ի խորս գիտութեան»:

Այս բառերուն առթիւ տրուած ստուգաբանութիւնները հետեւեալներն են. Նոր Հայկ. բառ. կը միացնէ մխել, մաքրտել բառերուն. Տէրվիշեան (անդ) երկուքն ալ մուխ. մխել արմատէն կը հանէ: Հիւնքեարպէյէնեան՝ մկրտել կը հանէ մակարդիլ բառէն, իսկ մխրճել=լտ. mergo, immergo «ընկղմել, լուանալ»: Pedersen, Հայ, դր. լեզ. էջ 227 մկրտել բային արմատը կը գնէ մկ, որ կը համեմատէ հուր. мокръ «խոնավ», мокнати «թրջիլ», мочити «թրջիլ» բառերուն հետ: Մառ, ЗВО 16 152, հայ թարգմ. Մկրտութիւն Հայոց, Վաղարշապատ. 1911, էջ 89 մկրտել բառին արմատը կը գնէ սեմական կրտ «կտրել», որով մկրտել կը կապուի թլփատելու գաղափարին: Վերի մեկնութենէն կերեայ սակայն թէ այս ստուգաբանութիւնը անստոյգ է և մկրտել ոչ մէկ կապ չունի թլփատելու հետ, այլ կապուած է ջուրի մէջ ընկղմելու գաղափարին, իբրև երկրորդ ձև մը մխրճել բային:

5. Նկահ

Այս բառը մէկ անգամ գործածուած է Մագիստրոսի Մեծ

են գործք Աստուծոյ ոտանաւորին մէջ (տպ. Վենետիկ, էջ 51—52), Պետրոս առաքեալի ուրացութեան առթիւ, հետեւեալ ձևով.

Յանկարծ ոմն այլ ասէ, սա ի ցեղէն Փալիլէին,
Վկայ իւր բանքն դայ, խօսքըն յայտնէ զդաւառին.
Եկաց նա ի խարուկին, ասէ չգիտեմ զինչ ասացին.
Կին ոմն այլ անդ երէկ յանդիմանեաց զինքն ի տեղին,
Ական այնոր եղև՝ նկան չեկաց իւրըն բանին,
Ապա հաւ խօսեցաւ ու նա յիշեաց զՔրիստոսին:

Նոր Հայկ. և Առձ. բառ. նկան բառը կը մեկնեն «չգիտցող, անգէտ, տգէտ». իբրեւ պրս. *âgâh* «ազան, գիտուն» բառին բացասականէն՝ *nâ âgâh* «տգէտ»: Հիւսղման չի յիշեր:

Նախ նկատենք որ երեկ բառը բոլորովին սխալ է. պէտք է ուղղել երեկ «եկաւ» (որ այն ժամանակ ծանօթ ռամիկ ձև մըն էր) և ամբողջ տողը կարգաւ հետեւեալ ձևով. Կին ոմն այլ անդ երեկ, յանդիմանեաց զինքն ի տեղին (ուրիշ կին մ'ալ եկաւ հոն և յանդիմանեց զայն այնտեղ):

Սակայն նկան «տգէտ» իմաստ մը բնաւ յարմար չէ տեղին. Ական այնոր եղև, նկան չեկաց իւրն բանին. երբ այս բանը իմացաւ, տգէտ չմնաց իր խօսքին ? անիմաստ է:

Ըստ իս նկան բառը պէտք է դնել պրս. *nigâh*, որ կը նշանակէ «հայեացք», բայց նաև «պահպանութիւն», հմմտ. *nigâhbân* «պահպան», ոճով կըսուի *nigâh dâs'tan* «պահ սենել, պահել, պահպանել», ասկէ *nigâhdâs't* «պահպանութիւն, աւանդ», *nigâhdâr* «պահող» և այլն: Ըստ այսմ հայերէնի մէջ ալ նկան կալ «պահել» և մասնաւորապէս «խօսքը պահել, խօսքին հաստատ մնալ»:

Վերի խօսքը կը թարգմանուի ուրեմն՝ «երբ այս բանը լսեց, իր խօսքին հաստատ չմնաց» (այսինքն երբ Պետրոս այն կնոջ յանդիմանութիւնը լսեց, ուրացաւ Քրիստոս, չպահեց այն իր խոստումը՝ որ տուած էր Անոր, թէ մինչև մահ իսկ չալիտի ուրանար):

6. Փանդանել

Այս անատոյգ բառը երկու անգամ գործածուած է հայ մատենագրութեան մէջ.

1. ի մէջ առեալ զգօրսն Պարսից, և սկսան փանդանել. զի իշխանն Պալունեաց կտրեաց երկու իշխանս և եհան զնոսա մինչև ի Հաշտեանս (Յովհ. մամիկ. Վենետ. 1832, էջ 52):

2. Որք թևս ունէին նման արծուին և փանդանէին (Գնձ):

Նոր Հայկ Բառ. ասոնցմէ առաջինը կը մեկնէ «փաթաթել, իբր պաշարել, կաշկանդել կամ ջարդել», իսկ երկրորդը անյայտ կը թողու:

Յովհ. Մամիկոնեանի տպագիրը կատարուած է հինգ ձեռագիրներու համեմատութեամբ. ասոնցմէ մէկը միայն ունի փանդանել, միւսը փանդանդել, իսկ երեք օրինակի մէջ կը գտնենք ամբողջապէս տարբեր դարձուած մը. «և պատեցին զգօրսն Պարսից և սկսան ջրուել ի միմեանց»։ Ասկէ կերևայ որ փանդանել անձանօթ բառը կը նշանակէ «ցրուել, ասդին անգին փախցնել»։

Թէ այս իմաստը ուղիղ է՝ կերևայ նաև Յովհ. Մամիկոնեանի ամբողջ մնացեալ պատմութենէն. այսպէս անմիջապէս հետեւորդ բառերը. «Զի իշխանն Պալուսեաց կտրեաց (բաժնեց. իրարմէ հեռացուց, անջատեց) երկու իշխանս և եհան (փախցուց) զնոսա մինչև ի Հաշտեանս»։ Քիչ յետոյ՝ «Եւ իբրեւ եհաս ի տեղի մի դաշտաձև, պակեաւ իշխանն փախստական, մինչդեռ զօրքն հետի էին» ևայլն։

Հատուածը կը վերջանայ ասպէս. «Եւ փախուցեալք ընդ երեսո դաշտին փախստեայք լինէին և անուանեցաւ տեղին այն Փաանդիկ»։

Յայտնի է որ Յովհ. Մամիկոնեանի (ինչպէս և իր անուանեալ նախորդին Զենոբի) սիրական սովորութիւնն է տեղական անունները զանազան պատերազմական դէպքերով ստուգաբանել. (հմմտ. Զենոբ էջ 27՝ Արձան, էջ 29՝ Արծուիք, էջ 30՝ Մետասկոդ, Արջուց ձոր, էջ 41՝ Աւետեաց բլուր. էջ 42՝ Աւետեաց խաչ, էջ 45՝ Թակարթս,— Յովհ. մամիկ. էջ 24՝ Առադս, էջ 28՝ Կորի, էջ 32՝ Առինչս, էջ 36՝ Մահու բլուր, էջ 39՝ Սրեմա ձոր, էջ 40՝ Ժողովս, էջ 42՝ Թմբրաձոր, Վարադարլուր, Շիրականիք, էջ 45՝ Մոգուց գերեզման, Մոկկունս, էջ 47՝ Հոնրնկէց, Հանդիսեանք, էջ 48՝ Էնտսանկ, Մահու առիթ, Կուրայ, էջ 52՝ Ներքինանկնիս, Վայրանկանիս, Պուղկ, էջ 53՝ Հայկերտ)։ Այսպիսի ստուգաբանութիւն մը կայ նաև հոս. փանդիկ տեղական անունը մեկնուած է «փախստեայ» բառով. բայց փանդիկ չի կրնար ձայնապէս կապուիլ փախելի փախուստ բառերուն. ուստի պէտք է աւելի մօտիկ ձև մը գտնել. և ահա ճիշտ այս է մեր փնտռած փանդանել բառը «փախցնել» իմաստով, կամ ասոր չեղօքը փանդանիլ «փախչիլ»։

Փանդանիլ «փախչիլ» ձևը շատ լաւ կը յարմարի նաև Գանձարանի վկայութեան. Որք թեա ունէին նման արծուին և փանդանէին, ուր կրնանք փանդանիլ առնել իբր սուրալ, վաղել, թռչիլ», որոնք «փախչիլ» իմաստին տարբեր առումներն են միայն։

Վերջին անգամ փանդանել բառը կը գտնեմ զորձաձուած Եփրեմի Արեւելեան վկայից մէջ (տպ. Էջմիածին, էջ 192—3) «ի խմշնքս սկսար բանդանել (Յայսմ. փանդանդիլ) և ի դառինս քո զայլ դարձար», ուր նոյնպէս «փախցնել, վրան յարձակուելով փախցնել» իմաստն ունի։